

**5.22. Քաղաքային համայնքների տարածքների սանիտարական մաքրումը 2005 թվականին**

Ըստ հանրապետության 44 քաղաքային համայնքների սանիտարական մաքրման աշխատանքներով զբաղվող կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների ամփոփ տվյալների, 2005թ. այդ քաղաքների սանիտարական մաքրման աշխատանքներում ներգրավված է եղել հատուկ նշանակության 536 մեքենա, որից 209-ը կամ 39.0%-ը՝ աղբատար: Երևան քաղաքում այդ ցուցանիշները, համապատասխանաբար, կազմել են՝ 269, 85 և 31.6%:


Վիճակագրական հաշվառման շրջանակում չեն ընդգրկվել Ապարան, Շամլուղ, Մարալիկ, Դաստակերտ քաղաքները՝ 2005թ. համապատասխան ծառայությունների գործունեության բացակայության պատճառով:

**Հատուկ նշանակության մեքենաների և կենցաղային աղբույսեր տեղափոխած կենցաղային կոշտ աղբի քանակական բաշխվածություններն ըստ ՀՀ մարզերի քաղաքային համայնքների, 2005թ.**

	Հատուկ նշանակության մեքենաների քանակը, միավոր	որից՝ աղբատար	Կենցաղային կոշտ աղբի քանակը, հազ. խոր. մ
ք.Երևան	269	85	790.6
Արագածոտն	3	2	59.2
Արարատ	30	12	112.2
Արմավիր	21	12	55.1
Գեղարքունիք	21	9	27.7
Լոռի	61	29	58.8
Կոտայք	45	20	44.0
Շիրակ	32	13	73.8
Սյունիք	24	11	88.5
Վայոց ձոր	7	4	5.3
Տավուշ	23	12	70.1
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>536</b>	<b>209</b>	<b>1385.3</b>

Հարկ է նշել, որ սանիտարական մաքրման կազմակերպություններում փաստացի աշխատած մեքենաների քանակը զգալի զիջել է առկա մեքենաների քանակին, այն պատճառով, որ դրանց մի մասը գտնվել է վերանորոգման ու կոնսերվացման մեջ, մյուսները՝ հարկադիր պարապուրդում, կապված մթնոլորտային պայմանների և այլ պատճառների հետ:

**Սանիտարական մաքրման համակարգի մեքենա-օրերի տոկոսային բաշխվածությունն ըստ փաստացի վիճակի, 2004-2005թթ.**



## 5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2005թ. հանրապետության քաղաքային համայնքներում հատուկ նշանակության մեքենաների աշխատաժամանակի օգտագործման օգտակար գործողության գործակիցը կազմել է 69.9%:

2005թ. ընթացքում սանիտարական մաքրման աշխատանքներում ընդգրկվել է քաղաքային համայնքների 4011.8 հազ. քառ. մ տարածք՝ մաքրված մեքենայացված եղանակով:

2005թ. հատուկ նշանակության մեքենաներով թափոնակուտակիչներ (աղբույսներ) է տեղափոխվել 1385.3 հազ. խոր. մ կոշտ կենցաղային աղբ, 4953 տ ձյուն և այլ թափոններ: Սանիտարական մաքրման համակարգում ընդգրկված 1000 քաղաքաբնակչի հաշվով այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 676.0 խոր.մ և 2417.0 կգ: